ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի առթիվ հյուրերին ուղղված ելույթներով հանդես եկան Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը եւ Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիան:

Շնորհավորելով ներկաներին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հոբելյանական տարեդարձի առիթով՝ դեսպան Ռուբեն Սադոյանը խոսեց երկու ժողովուրդներին դարերի ընթացքում միավորող բազմաթիվ կապերի ու արժեհամակարգային ընդհանրությունների մասին՝ ընդգծելով, որ այս ամուր հիմքի վրա ձեւավորված Հայաստանի եւ Վրաստանի միջեւ միջպետական հարաբերությունները հետեւողականորեն շարունակում են զարգանալ՝ արձանագրելով նոր դինամիկա, նոր տրամադրություն եւ նոր հեռանկարներ:

Իր հերթին, Լաշա Դարսալիան կարեւորեց բարձր եւ բարձրագույն մակարդակում փոխադարձ այցելությունների պարբերականությունը, որն արտացոլում է երկու պետությունների միջեւ առկա փոխվստահությունը, բարեկամությունն ու կարեւոր օրակարգը՝ հույս հայտնելով, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ համագործակցությունն օրինակելի կդառնա տարածաշրջանի համար:

*Լուսանկարները՝ ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ*




# «ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՀՐԱՇԱԼԻ ԷԻՆ»

## ԵՐԵՎԱՆԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Դարեր ի վեր ապրելով կողք-կողքի՝ կարեւոր է իմանալ միմյանց լեզուն, մշակույթը, գրականությունն ու պատմությունը:*

Լինելով վիրահայ, շատ լավ գիտեմ, թե ինչ է նշանակում հայ-վրացական հարաբերություններ, ուստի անչափ կարեւորում եմ բարձրակարգ փոխհարաբերություններն ու հանդիպումները: Եվ կարծում եմ, ճանաչողական եւ բացահայտող փոքրիկ քայլերից է սկսվում ամեն ինչ:

Խոսքիս վառ օրինակն էր Երեւանի Վ.Բրյուսովի անվան համալսարանի ուսանողներիս հետ այցը Թբիլիսի: Երկօրյա այցելության ընթացքում եղանք Թբիլիսիի Խոջիվանքի հայկական պանթեոնում, Վրաց Ուղղափառ առաջնորդանիստ Սուրբ



Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու բակում

Երրորդություն եկեղեցում, Սուրբ Գեւորգ հայկական առաջնորդանիստ եկեղեցում, ճոպանուղիով վայելեցինք մայրաքաղաքի գեղեցիկ տեսարանները: Համտեսեցինք վրացական համեղ խոհանոցն ու գինին: Այցի շրջանակներում՝ այցելեցինք նաեւ հինավուրց մայրաքաղաք Մցխեթա:

Ուսանողների ոգեւորությանը չափ ու սահման չկար: Առաջին այցելությունն էր հարեւանբարեկամ երկիր, տպավորություններն ուղղակի հրաշալի էին:

Սուրբ Գեւորգ հայկական եկեղեցի եկանք այն ժամանակ, երբ ավարտվել էր կիրակնօրյա պատարագը, եւ եկեղեցու բակում ուսանողներն անակնկալ հանդիպում ունեցան «Վրաստան» թերթի խմբագիր, քաղաքական-հասարակական գործիչ Վան Բայբուրթյանի հետ, ով ներկայացրեց հայ-վրացական հարաբերությունների համառոտ պատմությունը: Կարեւորեց երկու ժողովուրդների հազարամյա հարաբերությունները եւ պատմական ամուր կապերը: Ընդգծեց նաեւ, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առկա է սերտ համագործակցություն՝ քաղաքական, տնտեսական, հումանիտար, մշակութային եւ այլ ոլորտներում եւ, որ տարբեր մակարդակներով հանդիպումներն ու շփումները պետք է կրեն պարբերական բնույթ:

«Վրաստան» թերթի խմբագիրը ողջունեց Հայաստանի բուհերում վրացերենի դասավանդման փաստը, նշելով, որ առավել ողջունելի կլինի, եթե վրացական բուհերում էլ սկսեն հայերենի ուսուցումը:

- Մեր երկու եղբայր ժողովուրդները պետք է իրար հետ շփվեն առանց երրորդ լեզվի կիրառման կամ թարգմանիչների օգնության,- նշեց Վան Բայբուրթյանը եւ հայ ուսանողներին հորդորեց սովորել վրացերեն, իսկ վրացիներին՝ հայերեն:

Օգտվելով առիթից, ուզում ենք փոքր-ինչ ուշացումով, ի սրտե շնորհավորել Վրաստանում հայալեզու հասարակական-քաղաքական «Վրաստան» շաբաթաթերթի 100-ամյա հոբելյանը: Այն մինչ օրս երկխոսության հարթակ է վիրահայերի համար: Թերթի երկարակեցության գործում իրենց ուժն ու եռանդը չեն խնայել այնպիսի անհատականություններ, ինչպիսիք են Բենիկ Սեյրանյանը, Անահիտ Բոստանջյանը, Սոս Սիմավորյանը, Ռուբեն Թորոսյանը, Մրազ Ջաֆարովը, Էմմա Խաչատրյանը, Սամվել Պողոսյանը եւ, իհարկե, թերթի երկարամյա խմբագիր Վան Բայբուրթյանը իր մեծ դեր ու ներդրումով:

Միանալով բոլոր շնորհավորանքներին ու բարեմաղթանքներին՝ թերթի ողջ անձնակազմին մաղթում ենք ուժ ու եռանդ, իսկ թերթին՝ հարատեւություն:

***ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ***

***Վրացագետ, Երեւանի Վ.Բրյուսովի անվան համալսարանի վրաց լեզվի դասախոս***

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

# «ԹԲԻԼԻՍՅԱՆ ՀԱՅ ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ»՝ ԱԼ.ՊԻՐԱԴՈՎԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՑ

*Հունիսի 11-ին, Դիմիտրի Ուզնաձեի փողոցի թիվ 13-ում, մայրաքաղաքի հայտնի LART ցուցասրահում բացվեց եւ մինչեւ հունիսի 13-ը շարունակվեց «Թբիլիսյան գծանկարչության դարաշրջանը» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին թբիլիսյան հայ նկարիչների գործերը Ալեքսանդր Պիրադովի հավաքածուից:*

Ցուցահանդեսն անցկացվեց Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարության հովանու ներքո եւ նվիրված էր գեղանկարների ճանաչված հավաքորդի ծննդյան 90-ամյակին:

Արվեստի թբիլիսյան երկրպագուների շրջանում՝ լայն ժողովրդականություն են վայելում «Պիրադովյան երեկոները», որի կազմակերպիչն ու անցկացնողը բնիկ թբիլիսցի ինժեներ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայկական հին ազնվական տոհմի ժառանգ Ալեքսանդր Պիրադովն է: Նա կարողանում էր գեղարվեստական ներկայացման թեմատիկայի մեջ վարպետորեն միավորել գեղանկարչական եւ երաժշտական արվեստը, որին մասնակցում են ինչպես արհեստավարժներ, այնպես էլ՝ տաղանդավոր երիտասարդ նկարիչներ ու երաժիշտներ: Ալեքսանդր Պիրադովը նման երեկոներ է անցկացրել նաեւ Երեւանում, Թելավիում, Կրակովում, Մոսկվայում եւ Դոնի Ռոստովում:



«Թբիլիսյան գծանկարչության դարաշրջանը» ցուցահանդեսի բացմանը թբիլիսյան երաժշտության մոտիվներով գրված դաշնամուրային իր ստեղծագործությամբ ելույթ ունեցավ կոմպոզիտոր Գիորգի Շավերդաշվիլին, ջութակահար Դավիթ Հակոբյանն ու դաշնակահարուհի Թեոնա Միքելաձեն: Միջոցառման մասնակիցներին ներկայացվեց Արամ Խաչատրյանի «Երգ-պոեմը»:

Բացման արարողությանը մասնակցեցին Վրաստանի փոխվարչապետ, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարար Թեա Ծուլուկիանին, ճանաչված դերասաններ, երաժիշտներ, մտավորականության ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսի հաճախորդներին տրվեց ավագ սերնդի եւ ժամանակակից գծանկարչության հայ վարպետների գեղարվեստական ավանդույթներին եւ ստեղծագործությանը ծանոթանալու հնարավորություն:

Այս անգամ ճանաչված հավաքորդը ցուցահանդեսին ներկայացրել էր Վասիլի Պիրադովի, Եղիշե Թադեւոսյանի, Ալեքսանդր Բաժբեուկ Մելիքյանի, Երվանդ Քոչարի, Լեւոն Բոյախչեւի, Ալբերտ Դիլբարյանի, Գայանե Խաչատրյանի, Ռոբերտ Կոնդախսազովի, Իռենա Օհանջանովայի եւ թբիլիսյան հայ գծանկարիչների գործերը: Հարկ է առանձնակի նշել հիանալի գծանկարիչ Էդգար Շահինի (1874-1947) «Գործազուրկը», «Օֆորտը», որը նկարիչը ստեղծել է 1903 թվականին եւ Ալեքսանդր Պիրադովի կողմից գնվել է վրաց պետականության համար առաջին դժվարին տարիներին: Այդ ցուցանմուշն առանձնակի արժեքավոր է հայ դասական Ալեքսանդր Շիրվանզադեի՝ Փարիզում նկարչի արհեստանոց այցելելու ժամանակ արված մակագրությամբ, որը թվագրված է 1910 թվականով:

LART կազմակերպված ցուցահանդեսը նպաստում է Վրաստանում բնակվող հայկական մշակութային ավանդույթների պահպանմանը:

***ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ***

***Նկարում.- (ձախից) Իռենա Օհանջանովան, Վիկտորյա Պիրադովան, Խաթունա Կիկվաձեն, Ալեքսանդր Պիրադովը եւ Իա Բոկուչավան՝ ցուցահանդեսի բացմանը:***

***Լուսանկարը՝ Յուրի Ակուլյանի***

# ԹԲԻԼԻՍԻԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՆՇԵՑ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 90-ԱՄՅԱԿԸ




*Մայրաքաղաքի Հավլաբարի թաղամասում գործող թբիլիսյան այս հանրահայտ երաժշտական դպրոցը 90 տարեկան է: Բացվել է 1932 թվականին, հանրակրթական թիվ 80 դպրոցին առընթեր եւ հաջողությամբ գործում է մինչ օրս՝ վայելելով մեծ ժողովրդականություն եւ ապահովելով դիմորդների խիստ մրցակցություն:*

Դպրոցի երկրորդ հարկը՝ համերգային մեծ դահլիճով, կառուցվել է 50-ական թվականներին տնօրեն Նաթելա Ծերեթելու նախաձեռնությամբ: Իսկ 1982 թվականից թիվ 10 երաժշտական դպրոցը, արդեն արվեստի դպրոց կարգավիճակով, տնօրեն Տարիել Բերաձեի միջնորդությամբ, սկսել է կրել 20-րդ դարի մեծ երգահաններից մեկի՝ Արամ Խաչատրյանի անունը:

Իր գործի մեծ սիրահար եւ հիանալի կազմակերպիչ Տարիել Բերաձեն, ով ահա կես դար ղեկավարում է դպրոցը, բարեկամական եւ ստեղծագործական սերտ հարաբերություններ է պահպանում հայ երաժիշտների, Երեւանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի հետ եւ պատահական չէ, որ արժանացել է Հայաստանի մշակույթի նախարարության ոսկե մեդալի: Ամեն տարի, հունիսի 6-ին, Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, դպրոցում անց է կացվում բաց համերգ, որի ընթացքում կատարվում է մեծ երգահանի ստեղծագործություններից որեւէ մեկը: Իր գոյության 90 տարիների ընթացքում՝ դպրոցը դաստիարակել է բազում տաղանդավոր երիտասարդների: Ժամանակին դպրոցում դասավանդել են իրենց գործի այնպիսի վարպետներ, ինչպիսիք էին դաշնակահարներ Ա.Արզումանովը, Ա.Պողոսովը, Լ.Յակոբաշվիլին, Է.Ֆայնշտեյնը, Վ.Դմետրաշվիլին, Ժ.Շահպարոնովը, Ս.Անդրեեւը, հայր եւ որդի Նինոեւները, Լ.Չեկմենովան... ջութակահարներ՝ Գ.Շավերդյանը, Կ.Վարդանյանը (Վարդելին), Յա.Ճանճալաշվիլին, Ն.Մուրադովը, Ռ.Աթարբեկովը... թավջութակահար Շ.Պետրոսյանը, կլարնետիստ Լ.Ղալամքարովը, Ս.Բախչինյանը: Երաժշտության տեսությունը դասավանդում են Ե.Ղազարովը, Ռ.Բաբալիկաշվիլին:

Դպրոցի զարգացման գործում տարիներ շարունակ մեծ դեր է կատարել ուսմասվար Մարգարիտա Աղաջանովան: Այսօր դպրոցում շարունակում են աշխատանքը կրթօջախի վետերաններ, դաշնակահարներ Ի.Մերաբյանը, Ի.Բագոյանը, Տ.Բերաձեն, Ն.Թվիլդիանին, Ա.Տաբատաձեն, ջութակահարներ Վ.Շուլյուտան, Գ.Բանդուրան:

Դպրոցում գործում են ոչ միայն առանձին գործիքների երաժշտական դասարաններ, այլեւ երգեցողության եւ երգչախմբային, նկարչության, քանդակի, կիրառական արվեստի դասարաններ: Դպրոցի շրջանավարտների թվում են մեծ թվով միջազգային մրցույթների դափնեկիրներ, որոնցից շատերն այսօրվա դրությամբ աշխատում են աշխարհի տարբեր երկրներում՝ Տ.Ցվերելին (Շվեյցարիա), Վ.Մուրադովը (Արգենտինա), Ն.Բիչինաշվիլին (Իսպանիա), Թբիլիսիում ակտիվ ելույթներ է անցկացնում դաշնակահար Եսայի Աբովյանը:

Դպրոցի 90-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ Թբիլիսիի կոնսերվատորիայի մեծ դահլիճում անցկացվեց համերգ: Կոնսերվատորիայի ճեմասրահում ներկայացվել էին դպրոցի աշակերտների ստեղծագործությունները, որոնք արժանացան հանդիսատեսի ուշադրությանը: Հանդիսության ներկա էին Թբիլիսիի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի ներկայացուցիչներ:

***ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ***

ԴՊՐՈՑ

# ԴԱՄԱԼԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀՆՉԵՑ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ» ՈՒ ԿԱՅԱՑԱՎ «ՀՐԱԺԵՇՏ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻՆ» ՀԱՆԴԵՍԸ

*Այդ օրը Դամալայի հանրային դպրոցին հրաժեշտ էր տալիս եւս մեկ սերունդ: Միախառնվել էին երիտասարդության շեմին կանգնած շրջանավարտների հույզերն ու թախիծը: Այդ գեղեցիկ միջոցառումը տեղի ունեցավ XII դասարանի դասղեկ Նինա Սիրականյանի եւ երաժշտության ուսուցչուհի Վարսենիկ Սաղաթելյանի կազմակերպչական աշխատանքի շնորհիվ:*



Շրջանավարտները երախտագիտության խոսքեր հղեցին բոլոր ուսուցիչներին, դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանին, փոխտնօրեն Լալա Գրիգորյանին, դասղեկին, առաջին դասարանի դասվար Սիրանուշ Հակոբյանին, ով բազում սերունդների միտք է լուսավորել:

Բարեմաղթանքի իրենց խոսքն ասացին դպրոցի տնօրեն Նելլի Դուդուկչյանը, Ասպինձայի մունիցիպալիտետի քաղաքապետ Ռոստոմ Մագրաքվելիձեն, Ասպինձայի ռեսուրս-կենտրոնի վարիչ Տրիստան Մուրադաշվիլին, սակրեբուլոյի նախագահ Բեսիկ Բերիձեն, սակրեբուլոյի պատգամավոր Էմին Բալոյանը:

«Վերջին զանգ» միջոցառմանը հաջորդեց «ՀՐԱԺԵՇՏ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻՆ» միջոցառումը:

Հրաժեշտի միջոցառումը տեղի ունեցավ տոնականորեն զարդարված հանդիսությունների դահլիճում՝ առաջին դասարանի դասվար Գոհարիկ Սահակյանի, մայրենի լեզվի ուսուցչուհի Կլարիկ Բաղդասարյանի, երաժշտության ուսուցչուհի Վարսենիկ Սաղաթելյանի եռանդուն աշխատանքների շնորհիվ:

***ՆԻՆԱ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ***

***Դամալայի հանրային դպրոցի ուսուցչուհի***

***Ասպինձայի մունիցիպալիտետ***

ԿՐԹԱԿԱՆ

# ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ




*Նոր ուսումնական տարվանից, Վրաստանի հանրակրթական դպրոցների աշակերտները կունենան բանկային հատուկ հավելված մուտք գործելու հնարավորություն:*

Ծրագիրը մշակել է Bank of Georgia (BOG) բանկը: Հավելվածը դպրոցականներին հնարավորություն կընձեռի տնօրինել իրենց գրպանի փողերը՝ այն լրացնել, վճարել գնումների համար, վարժվել բյուջեի ծրագրմանը: Համակարգը պարբերաբար նրանց կհանձնի հատուկ առաջադրանքներ, որպեսզի երեխաները է՛լ ավելի ներգրավվեն գումարների իրատեսական ծախսման գործընթացում:

Բանկի ներկայացուցիչ Նինո Խորգուանու խոսքով, հավելվածի բետա BETA (փորձնական) տարբերակը կթեստավորվի ընթացիկ տարվա ամռանը, իսկ նոր ուսումնական տարվանից աշակերտները կկարողանան օգտվել բաց տարբերակից:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԱՏԱՐՈՒՄ

*Հունիսի 13-14-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, երկօրյա պաշտոնական այցով, գտնվում էր Կատարում:*



«Դոհա» միջազգային օդանավակայանում վարչապետին դիմավորեց Կատարի արտաքին գործերի պետական նախարար Սուլթան բին Սաադ Ալ-Մուրեյխին:

Պաշտոնական այցի շրջանակում Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Կատարի էմիր Թամիմ բին Համադ Ալ Թանիի, Կատարի վարչապետ, ներքին գործերի նախարար Շեյխ Խալիդ բին Խալիֆա բին Աբդուլազիզ Թանիի, Կատարի ներդրումային գործակալության տնօրեն Մանսուր Ալ-Մահմուդի հետ:

Հայաստանի եւ Կատարի վարչապետների ներկայությամբ, երկու երկրների միջեւ ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր:

Այցի շրջանակներում՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դոհայում Կատարի Հայր էմիր բին Համադ Խալիֆա Ալ Թանիին հանձնեց Հայաստանի Հանրապետության «Բարեկամության շքանշան», որը նրան շնորհվել է ժողովուրդների միջեւ քաղաքական, տնտեսական, գիտակրթական համագործակցության, մշակութային եւ կրոնական փոխըմբռնման, ինչպես նաեւ՝ բարեկամական կապերի ամրապնդման եւ զարգացման գործում ունեցած նշանակալի ծառայությունների համար:

# ԵԱՀԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



*Հունիսի 16-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մարգարետա Սեդերֆելտի գլխավորած պատվիրակության հետ:*

Հանդիպմանը, ԵԱՀԿ ԽՎ նախագահի խնդրանքով, Հայաստանի վարչապետն անդրադարձավ Հայաստանի ներքաղաքական իրավիճակին, Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացներին, ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը:

Կառավարության ղեկավարը կարեւորեց տարածաշրջանում կայունության եւ խաղաղության ամրապնդումը եւ ընդգծեց՝ տարածաշրջանային կայունությունը խաթարող սադրիչ հայտարարություններին ու գործողություններին, ինչպես նաեւ ադրբեջանական վերահսկողության ներքո անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման քայլերին միջազգային հանրության համարժեք արձագանքի կարեւորությունը:

Միաժամանակ, վարչապետ Փաշինյանը կարեւորեց ԼՂ հակամարտության համապարփակ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՆԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 9 ՏՈԿՈՍ

*Հայաստանում, մայիս ամսվա դրությամբ, գնաճը կազմել է 9 տոկոս, եթե որեւէ նոր արտասովոր բան տեղի չունենա, ապա, Կենտրոնական բանկի գնահատմամբ, գնաճը տարվա վերջին ավելի ցածր կլինի:*

Այդ մասին Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը հայտարարեց Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

Նրա խոսքով, շրջապատող կամ գործընկեր երկրներում գնաճի ցուցանիշը շատ ավելի բարձր է, քան Հայաստանում, բայց պետք է հասկանալ, որ սպառողական գների ինդեքսի 9 տոկոս աճը ենթադրում է, որ առաջին անհրաժեշտության ապրանքների գնաճը շատ ավելի բարձր է:

Անդրադառնալով փոխարժեքի շուկայում նկատվող զարգացումներին, նա ընդգծեց՝ ԿԲ-ը որեւէ ազդեցություն չունի փոխարժեքի ձեւավորման վրա: Փոխարժեքը ձեւավորվում է շուկայում ազատ առաջարկի եւ պահանջարկի հիման վրա: ԿԲ նախագահի հավաստմամբ, Հայաստանում դրամի արհեստական արժեզրկումը կարող է հանգեցնել լուրջ խնդիրների:

- Հայաստանում դրամի փոխարժեքը ազատ լողացող է, եւ դա համարվում է շոկերը կլանող լավագույն գործիքը: Մենք այս պահի դրությամբ ՀՆԱ-ի ցուցանիշը վերանայել ենք ու աճը սահմանել ենք 4,9 տոկոս՝ պայմանավորված հիմնականում արտաքին պահանջարկով: Այդ նույն արտաքին պահանջարկը Հայաստանի տնտեսությունում նպաստեց դրամի որոշակի արժեւորմանը, ինչը նաեւ թույլ տվեց որոշակիորեն չարձագանքել ընդլայնվող գնաճային միջավայրին ու տոկոսադրույքը թողնել անփոփոխ,- ասաց Մարտին Գալստյանը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԲԱՆՅԱԿԸ ԿԱՊ Է ՀԱՍՏԱՏԵԼ ԵՐԿՐԻ ՀԵՏ

*Իսպանական SATLANTIS ընկերությունը հայտարարություն է տարածել Հայաստանի առաջին արբանյակը՝ «Ուրդանետա»-ն Տիեզերք ուղարկելու վերաբերյալ՝ նշելով, որ իրենք հպարտ են համագործակցելու Հայաստանի հետ:*




ԱՄՆ Կանավերալ հրվանդանից արբանյակի հաջող արձակումից հետո, SATLANTIS-ը հայտարարել է հայկական պետական «Գեոկոսմոս» ընկերության հետ համաձայնագիր կնքելու մասին, որով ընկերությանը տրամադրվում է Երկրի դիտարկման լիարժեք համակարգ:

«Ուրդանետա»-ն, որն ստացել է աշխատանքային ARM-SAT-1 անվանումը, ունի 2մ օպտիկայի տարածքային թույլատվություն:

Նշվում է, որ, հաջող մեկնարկից հետո, առաջին հայկական արբանյակը լավ վիճակում է ու պատրաստ՝ առաջիկա 4 տարիների ընթացքում կատարել իր աշխատանքը: Մայիսի 26-ին ARM-SAT-1-ն առաջին կապն է հաստատել Երկրի հետ, արբանյակի բոլոր ենթահամակարգերն անխափան վիճակում են:

Արբանյակի առաքելության մանրամասներն ու առաջին արդյունքները ներկայացվելու են Երեւանում՝ սեպտեմբերին անցկացվող «Սթարմուս» փառատոնի շրջանակում:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ՄԵՐԺԵԼ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ

***Հայաստանի ԱԳ նախարարությունն արձագանքել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությանը, թե Հայաստանը հրաժարվել է Թբիլիսիում Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի արտաքին գործերի նախարարների մակարդակով եռակողմ հանդիպում անցկացնելու առաջարկից:***

***- Մենք ոչ միայն չենք մերժել, այլեւ մշտապես դրական ենք արտահայտվել նման հավանական հանդիպման մասին՝ միաժամանակ նշելով, որ պետք է աշխատանք տանել հանդիպման արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ,- հայտարարել է ԱԳՆ մամուլի խոսնակ Վահան Հունանյանը:***

## «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ-2022» ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ




***Հունիսի 15-ին, Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, աշխատանքը սկսեց «Գիտության եւ գործարարության օրեր-2022» գիտաժողովը:***

***Միջոցառման նպատակն է՝ փոխգործակցության զարգացումը եւ գիտության առեւտրայնացման հնարավորությունների բացահայտումը:***

## ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՌԱՖԱՅԵԼ ՔՈԹԱՆՋՅԱՆԸ



***Հունիսի 13-ին, 80 տարեկան հասակում, մահացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստ, Հայաստանի ժողովրդական արտիստ Ռաֆայել Քոթանջյանը:***

***Ռաֆայել Քոթանջյանը ծնվել է 1942 թվականի սեպտեմբերի 9-ին, Թբիլիսիում: 1946 թվականին տեղափոխվել է Երեւան:***

***1960-1964 թվականներին սովորել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետում:***

***1964-1966 թվականներին՝ որպես դերասան եւ ռեժիսոր աշխատել է Ջանգեզուրի Շիրվանզադեի անվան թատրոնում:***

***1966-1968 թվականներին եղել է «Արշալույս» երիտասարդական թատրոնի դերասան: 1968-1970 թվականներին հաճախել է հեռուստատեսային ռեժիսուրայի բարձրագույն կուրսերի Մոսկվայում: 1970-1993 թվականներին աշխատել է Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում՝ որպես դերասան եւ ռեժիսոր:***

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻՆ

*Հունիսի 13-ին անցկացվեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի գործադիր մարմնի նիստը՝ նախագահությամբ Համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի, փոխնախագահներ Ալբեր Բոյաջյանի (ԱՄՆ), Ստեփան Տեր-Պեդրոսյանի (Լիբանան), Ռոլանդ Շառոյանի (Հայաստան), գործկոմի անդամներ Հերմինե Դուզյանի (Ֆրանսիա), Ավո Թոքատլյանի (Արգենտինա), Եփրեմ Բաղի (Թուրքիա), Վրեժ Շառոյանի (Սիրիա), Շահան Սեմերջյանի (Լիբանան):*

Նիստին քննարկվեցին Համահայկական ամառային հերթական խաղերի կազմակերպման ու անցկացման հարցերը:

Նիստում ընդունվեց որոշում՝ Համահայկական ամառային 8-րդ խաղերն անցկացնել 2023 թվականի օգոստոսին: Առաջարկների փաթեթը քննարկման փուլում է, այդուհանդերձ, գործադիր կոմիտեն նախատեսում է.

ամառային 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունն անցկացնել Գյումրիում, իսկ խաղերը՝ Շիրակի եւ Արագածոտնի մարզերի մի շարք քաղաքներում:

ամառային 8-րդ խաղերի եզրափակիչ հատվածն ու փակման հանդիսավոր արարողությունն անցկացնել Երեւանում:

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի քաղաքային մարմիններին՝ պատվիրակություններին կազմում ընդգրկել նաեւ հաշմանդամություն ունեցող հայազգի մարզիկների:

Գործադիր մարմնի քննարկմանը եւ հավանությանը կներկայացվեն նաեւ՝ Համահայկական ձմեռային 2-րդ խաղերը 2024 թվականի փետրվարին Ծաղկաձորում անցկացնելու վերաբերյալ:

Վերոհիշյալ առաջարկները կուղարկվեն գործադիր մարմնի անդամների հաստատմանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ



*19.06.2022 Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի*

Հայոց եկեղեցու մեծ տոներից է Սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սբ. Էջմիածնի հիմնադրման տոնը:

*21.06.2022 Հիշատակ Սուրբ Նունե եւ Մանե կույսերի*

*25.06.2022 Սուրբ Ներսես Մեծ Հայրապետի եւ եպիսկոպոսի հիշատակության օր*

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ



# ԹԲԻԼԻՍԻԻ ՋՐՀԵՂԵՂԻՑ ՅՈԹ ՏԱՐԻ ԱՆՑ...

## ԲԵԳԻ ԳԵՏԱՁԻՈՒ ԱՐՁԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

*Թբիլիսիի ջրհեղեղից 7 տարի է անցել: 2015 թվականի հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը հորդառատ անձրեւից հեղեղված Վերե գետը խլեց 23 մարդու կյանք, ավերվեցին բնակելի տներ, Թբիլիսիի կենդանաբանական այգին, Հերոսների հրապարակի ավտոճանապարհները, «Մզիուրի» զբոսայգու մեծ մասը: Անօթեւան մնաց 200-ից ավելի ընտանիք: Ընդհանուր վնասը կազմեց 50 մլն լարի:*

Հունից ելած գետը գրեթե ամբողջությամբ հեղեղել էր Կենդանաբանական այգին, իր տակ առնելով կենդանիների գերակշիռ մասը, իսկ մի քանի օր անց, փնտրվող վագրի հարձակումից չհաջողվեց փրկել եւս մեկ քաղաքացու:

... Յուրաքանչյուր տարի հունիսի 13-ը ծանր հիշողություններ է արթնացնում եւ թախիծ բերում քաղաք: Այս տարի քաղաքում մթնոլորտը քիչ այլ էր: «Մզիուրի» զբոսայգում բացվեց «Բեգի» գետաձիու արձանը:

- Իրադարձությունը հաճելի է ոչ միայն արձանի բացման, այլեւ՝ բովանդակային տեսանկյունից, քանի որ նույնիսկ այն ողբերգական պահին, բոլորի ուշադրությունը շեղել էր քաղաքի միջով զբոսնող գետաձին ու ժպիտ առաջացրել: Ուստի, որոշեցինք հենց նրա արձանը տեղադրել «Մզիուրիի» զբոսայգում, որպեսզի իր շուրջ մշտապես ուրախություն, երջանկություն ու խինդ ապահովի,- ասաց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն՝ իր ելույթում:

Նշենք, որ քանդակագործ Էրեկլե Ծուլաձեի այս քանդակը հաղթող էր ճանաչվել քաղաքապետարանի կողմից հայտարարված մրցույթում, որը նվիրված էր 2015 թվականի հունիսի 13-ի իրադարձություններին:

ՍՊՈՐՏ

## ՖՈՒՏԲՈԼ. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԳԼԽԱՎՈՐԵԼ C4 ԽՄԲԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԿՐԿԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԿՈՐՑՐԵՑ

*Անցկացվեցին ֆուտբոլի Ազգերի լիգայի եվրոպական խմբերի հերթական հանդիպումները:*

C4 խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը սեփական հարկի տակ ընդունեց Բուլղարիայի հավաքականին ու, չնայած խաղային մեծ առավելությանը, չկարողացավ գրավել մրցակցի դարպասը, եւ խաղն ավարտվեց 0:0 հաշվով:

Վրաստանի հավաքականը, չորս հանդիպումներից հետո, վաստակելով 10 միավոր (12:2 գնդակների հարաբերությամբ), միանձնյա գլխավորում է C4 խմբի մրցաշարային աղյուսակը:

B1 ենթախմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը իր խմբում անցկացրեց երրորդ եւ չորրորդ հանդիպումները:

Լեհաստանի Լոձ քաղաքում հայ ֆուտբոլիստները մրցեցին Ուկրաինայի հավաքականի հետ եւ զիջեցին 0:3 հաշվով: Երեք օր անց, հայ ֆուտբոլիստները Երեւանում հյուրընկալեցին շոտլանդացիներին եւ կրկին պարտվեցին 1:4 հաշվով: Հատկանշական է, որ երեւանյան խաղում հայ ֆուտբոլիստները ստացան 2 կարմիր քարտ եւ խաղն ավարտեցին 9 ֆուտբոլիստով:

Նշենք, որ Հայաստանի հավաքականը՝ 3 միավորով, զբաղեցնում է խմբի վերջին՝ չորրորդ հորիզոնականը:

Վրաստանի հավաքականը, Ազգերի լիգայի խմբային մրցաշարի շրջանակներում, հաջորդ հանդիպումը կանցկացնի սեպտեմբերի 23-ին սեփական հարկի տակ եւ կհյուրընկալի Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականին:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա սեպտեմբերի 24-ին այն կհյուրընկալի Ուկրաինայի հավաքականին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ԽԱՂԱԴԱՇՏԸ ԲԱՑՎԵՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽԱՂՈՎ



Հունիսի 15-ին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի 30-ամյակին նվիրված միջոցառումների շարքը սկսվեց Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքից, որտեղ համաշխարհային ֆուտբոլի լեգենդներն ընկերական հանդիպում անցկացրին նոր խաղադաշտում:

«ՖԻՖԱ-աշխարհ» թիմի կազմում հանդես եկողների թվում էին Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Լեւան Կոբիաշվիլին, Ալեքսանդր Իաշվիլին, իտալացի Ֆերնանդո Իերոն, թիմի ավագ ՖԻՖԱ-ի նախագահ Ջաննի Ինֆանտինոն: Իսկ Հայաստանի թիմում հանդես եկան նաեւ Ռոման Բերեզովսկին, Ալբերտ Սարգսյանը, Անդրեյ Մովսիսյանը, Յուրա Մովսիսյանը, Էդգար Մանուչարյանը եւ որպես թիմի ավագ՝ Յուրի Ջորկաեֆը: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 8:8 հաշվով:

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Հունիսի 16-ին, Երեւանում, Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտում, կայացավ Հայաստան-Վրաստան լեգենդների հրաժեշտի հանդիպումը՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հիմնադրման 30-ամյակի կապակցությամբ:*

Հայաստանի լեգենդների հավաքականը՝ 4:1 հաշվով հաղթեց Վրաստանի ֆուտբոլի լեգենդներին:

Վրաստանի հավաքականի կազմում խաղում էին դարպասապահ Նուկրի Ռեւիշվիլին, լեգենդար ֆուտբոլիստներ Լեւան Կոբիաշվիլին, Ալեքսանդր Իաշվիլին, Գոչա Ջամարաուլին, Ջանո Անանիձեն, Գիորգի Դեմետրաձեն, Օթար Մարցվալաձեն եւ այլք:

Հայաստանի հավաքականի կազմում էին Յուրա Մովսիսյանը, Էդգար Մանուչարյանը, Ռոբերտ Արզումանյանը, Մարկոս Պիզելլին, Կառլեն Մկրտչյանը, Գեւորգ Կասպարովը եւ այլք:

Հոբելյանի առթիվ կազմակերպված միջոցառումների շրջանակներում, Հայաստան են այցելել ՖԻՖԱ-ի եւ ՈւԵՖԱ-ի նախագահներ Ջաննի Ինֆանտինոն եւ Ալեքսանդր Չեֆերինը:



## ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 6.Քանդակ: 8.Հայկական ուտեստ: 10.Լույսի, մաքրության աստվածը հայոց դիցարանում: 11.Վայր: 13.Որեւէ պետության զինված ուժերի ամբողջություն: 14.Արաբ երգչուհի: 16.Ռումբ: 17.Ըմբշամարտ: 18.Լացուկոծ, ողբ: 20.Վրացի ֆուտբոլիստ ... Ալեքսիձե: 21.Հոտառության օրգան: 22.Իրարանցում, խառնաշփոթություն: 26.Անկյուշտ: 28.Թեթեւ ուտեստ: 31.Պայտ: 32.Միանձնյա իշխանություն խորհրդանշող գլխանոց: 34.Թունավոր «ակնոցավոր» օձ: 35.Տեմպի միավոր դասական երաժշտության մեջ: 36.Լողանճ: 38.Ձեռքի փոքր թմբուկ: 41.Մեծ, վիթխարի: 43.Փայտանյութ: 45.Ճակատագիր: 48.Արվեստի ձեւ: 49.Գրքի շապիկ: 52.Արյան շրջանառության կենտրոնական գործարանը: 53.Վարս, ծամ: 54.Բրազիլիայի երկրորդ մեծագույն քաղաքը: 55.Հարցական դերանուն: 56.Գործիք՝ փորագրության համար: 57.Սանրվելու հարմարանք: 58.Անվճար: 59.Հայաստանում ամենատարածված ձկնատեսակը: 60.Բռնակ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Դրական հատկություն: 2.Բանաստեղծ ... Փանիկյան: 3.Խարազան, ճիպոտ: 4.Գույնզգույն: 5.Քաղաք-պետություն: 7.Ավանդ, գրավական: 9.Տնային վարձու աշխատող կին: 12.Ջրարջ: 15.Խոշոր լիճ Ռուսաստանում: 19.Շքեղ ամառանոց: 23.Նկարիչ՝ ... Թերլեմեզյան: 24.Թակարդ: 25.Աղետալի դեպք: 27.Շինանյութ: 29.Թատրոնի եւ կինոյի դերասանուհի ... Էլբակյան: 30.Մեսրոպյան տառ: 32.Հակառակ, ձախողակ: 33.Իսպանացի գեղանկարիչ Ֆրանցիսկո ...: 37.Ջամուսնացած: 39.Խարկած ալյուրով, յուղով ու մեղրով ուտելիք: 40.Իտալական մարզական ավտոմեքենա: 41.Խոշոր կապոց, բեռ: 42.Խաղատուն: 44.Ա.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 46.Եպիսկոպոսական ձեռնափայտ: 47.Քաղաք Գերմանիայում: 50.Սուլխան-Սաբա Օրբելիանու գրական ժանրը: 51.Անասունների սպանդ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Պարոնյան: 6.Շաբաթ: 10.Արամե: 11.Այբ: 12.Լոխ: 13.Հայոս: 15.Տոթ: 16.Արու: 18.Ասր: 20.Առույգ: 22.Մերանի: 25.Ամոթ: 26.Սուր: 27.Լեշ: 28.Սա: 30.Աստրա: 32.Ես: 35.Աղ: 36.Նինվե: 38.Նովա: 39.Միմինո: 40.Փչակ: 42.Դրամա: 43.Ալիշան: 46.Աշտարակ: 48.Ցլիկ: 51.Ալ: 52.Ահուդող: 53.Աս: 55.Ջվարան: 57.Ել: 58.Սե: 59.Դաս: 60.Բնիկ: 61.Մետր: 62.Վան: 63.Անհուշ: 64.Սերոբ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 2.Աղբյուր: 3.Որոտան: 4.Յալթա: 5.Նախիր: 6.Շահնամե: 7.Ամա: 8.Բեյրութ: 9.Պանամա: 14.Սիգ: 17.Րե: 19.Սիրանո: 21.Ռոշեն: 23.Աստղիկ: 24.Իսանի: 25.Ալպեր: 29.Աղայան: 31.Սամարա: 33.Սոմալի: 34.Ջափարիձե: 37.Ինդիրա: 41.Կակուլի: 43.Ատլաս: 44.Լա: 45.Շահեն: 47.Շարան: 48.Ցող: 49.ԼՂ: 50.Կաստրո: 54.Սեր: 56.Ադամ: 60.Բահ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445